

ԶԲԱՂՄՈՒՆՔԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ

Պաշտոնի(գրադմունքի) անվանումը	Դարբին - դրոշմող
Դերը	սև և գունավոր և մետաղներից կռվածքներ և դրոշմված մեքենամասերի պատրաստում
Խնդիրների բնագավառ 1.	Նախապատրաստվածքի կտրում
Աշխատանքային գործընթացը	դարբին - դրոշմողը ստանում է ձողաձև կամ թերթային նախապատրաստվածք և կտրում այն ըստ պահանջվող չափի
Կատարման չափանիշը	կտրված նախապատրաստվածքները համապատասխանում են տեխնիկական քարտի պահանջներին
Խնդիրների բնագավառ 2.	Ձողաձև նախապատրաստվածքի կտրում
Աշխատանքային գործընթացը	դարբինը ըստ տեխնիկական քարտում նշված հաջորդականության և չափերի կտրում մուրճի վրա կատարում է կտրում
Կատարման չափանիշը	<ul style="list-style-type: none"> կռվածքը համապատասխանում է տեխնիկական քարտի պահանջներին կռվածքի նյութի մեխանիկական հատկությունները համապատասխանում են տեխնիկական քարտի պահանջներին
Խնդիրների բնագավառ 3.	Ձողաձև նախապատրաստվածքի տաք դրոշմում
Աշխատանքային գործընթացը	դրոշմողն ըստ տեխնիկական քարտում նշված հաջորդականության և չափերի դրոշմման մուրճի կամ տաք դրոշմման շուտովիկային մամլիչի վրա կատարում է դրոշմում
Կատարման չափանիշը	<ul style="list-style-type: none"> կռվածքը համապատասխանում է տեխնիկական քարտի պահանջներին
Խնդիրների բնագավառ 4.	Դրոշմված կռվածքի ծլեպի և միջակայի հեռացում
Աշխատանքային գործընթացը	դրոշմողը կողահատման մամլիչի վրա ըստ տեխնիկական քարտի կողահատում է կռվածքի ծլեպը և անցքահատում միջակայը
Կատարման չափանիշը	<ul style="list-style-type: none"> կողահատված և անցքահատված կռվածքի չափերը համապատասխանում են տեխնիկական քարտի պահանջներին
Խնդիրների բնագավառ 5.	Մեքենամասի դրոշմում հատային թերթային նախապատրաստվածքից
Աշխատանքային գործընթացը	դրոշմողը ըստ տեխնիկական քարտի կատարում է արտահատման, անցքահատման, արտաձգման, ծոման, ձևավորման գործընթաց
Կատարման չափանիշը	<ul style="list-style-type: none"> դրոշմված մեքենամասը համապատասխանում է տեխնիկական քարտի պահանջներին
Խնդիրների բնագավառ 6.	Մեքենամասի դրոշմում շերտային կամ ժապավենային նախապատրաստվածքից
Աշխատանքային գործընթացը	դրոշմողը կատարում է դրոշմման գործընթացներ մատուցման քայլը պահելով ձեռքով կամ ավտոմատ մատուցման մեխանիզմի օգնությամբ
Կատարման չափանիշը	<ul style="list-style-type: none"> դրոշմված մեքենամասը համապատասխանում է տեխնիկական քարտի էսքիզին և չափերին
Խնդիրների բնագավառ 7.	Մեքենամասի սառը ծավալային դրոշմում ձողաձև անրնդիատ նյութից
Աշխատանքային գործընթացը	դրոշմողը կատարում է ծավալային դրոշմման օպերացիաներ, պատրաստելով մանեկ, հեղյուս, գամ և նմանատիպ մեքենամասեր
Կատարման չափանիշը	<ul style="list-style-type: none"> դրոշմված մեքենամասերը պետք է համապատասխանեն տեխնիկական քարտի պահանջներին
Բարդության և պատասխանատվությունը աստիճանը	
Բարդության աստիճան	պարզ, միջին և բարդ

Պատասխանատվությունը	կատարված աշխատանքի որակը և ժամանակին կատարելը
Մասնագիտական գիտելիքներ, կարողություններ և վերաբերմունք	
Լեզուները	<ul style="list-style-type: none"> • հայերեն • օտար լեզվի բավարար իմացություն, շփվելու և մասնագիտական գրականությունից օգտվելու համար
Համակարգիչը	կոման և դրոշմման վերաբերյալ ծրագրերով աշխատելու կարողություն
Գիտելիքը	<ul style="list-style-type: none"> • գիտելիքներ մասնագիտության մեջ օգտագործվող գունավոր և սև մետաղների և նրանց համաձուլվածքների մեխանիկական հատկությունների վերաբերյալ • գիտելիքներ մասնագիտական գործիքների և դրոշմիչների կառուցվածքի և օգտագործման վերաբերյալ • գիտելիքներ մասնագիտական սարքավորումների կառուցվածքի և օգտագործման վերաբերյալ • գիտելիքներ մետաղների ջերմային մշակման եղանակների մասին • գիտելիքներ կոման և տաք դրոշմման ջերմաստիճանային միջակայքի մասին • գիտելիքներ կոման և տաք դրոշմման անհրաժեշտ ջերմաստիճանը ապահովվող ջերմային սարքավորումների վերաբերյալ • գծագրական աշխատանքներ կատարելու հիմունքների իմացություն • գիտելիքներ չափագիտության հիմունքների, թույլտվածքների և նստեցվածքների մասին • մաթեմատիկական ոչ բարդ հաշվարկների կատարման իմացություն • գիտելիքներ սառը և տաք դրոշմման ոչ բարդ մամլամայրերի և մամլամատերի չափերի հաշվարկի վերաբերյալ • աշխատանքային օրենսգրքի նորմատիվ պահանջների իմացություն • իմացություն հարկային դաշտի իրավական պահանջների վերաբերյալ • աշխատանքային և հակահրդեհային անվտանգության ընդհանուր կանոնների իմացություն • աշխատանքային անվտանգության և առողջության պահպանման նորմատիվ պահանջների իմացություն
Կարողությունները, հմտությունները և վերաբերմունքը	<ul style="list-style-type: none"> • տեխնիկական քարտեր կարդալու և տեխնիկական էսքիզներից օգտվելու կարողություն • տեխնիկական էսքիզներ գծագրելու կարողություն • դարբնոցա - դրոշմիչային սարքավորումներ օգտագործելու կարողություն • դարբնոցա - դրոշմիչային գործիքներ և հանդերձանքներ օգտագործելու կարողություն • դարբնոցա - դրոշմիչային տեխնոլոգիայով ստացած արտադրանքի չափերի և որակի ստուգման կարողություն • դարբնոցա - դրոշմիչային արտադրության ոչ բարդ գործիքների և հանդերձանքների կառուցվածքի նախագծման կարողություն • կովածքների և դրոշմված մեքենամասերի պատրաստման համար նախատեսված ժամանակում տեխնիկական գծագրերով աշխատանքների ճշգրիտ և որակյալ կատարում • կայծի օգնությամբ մետաղի մակնիշի դրոշմման հմտություն • շիկացած մետաղի գույնով տաքացման ջերմաստիճանի դրոշմման հմտություն • սեփական մտահղացումները առաջարկելու կարողություն • աշխատանքային առաջադրանքները ժամանակին և որակով

	<p>կատարելու պատրաստակամություն, հանձնարարականները ճշգրտելու կարողություն</p> <ul style="list-style-type: none"> • անհատական և խմբային աշխատանքները կատարելու կարողություն • մարդկանց հետ շփվելու կարողություն • բնության պահպանման և շրջակա միջավայրը չաղտոտելու հակում
--	---

ՀԱՎԵԼՎԱԾ 2

ԱՐՀԵՍՏԱՎՈՐԻ «ԴԱՐԲԻՆ - ԴՐՈՇՄՈՂ» ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՇՆՈՐՀՄԱՆ՝ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ԵՎ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

Արհեստավորի «Դարբին-դրոշմող» որակավորման շնորհման՝ մասնագիտական գիտելիքների և կարողությունների գնահատման չափանիշներն են՝

1. Պետական կրթական (որակավորման) չափորոշիչի բոլոր մոդուլների համապատասխան ուսումնառության արդյունքներով սահմանված մասնագիտական գիտելիքները, որոնց ստուգումն իրականացվում է համալիր թեստային հարցման միջոցով: Թեստը բաղկացած է վերոնշյալ բոլոր ուսումնառության արդյունքներին վերաբերող՝ ընդհանուր թվով 40 հարցից:

Արդյունքը համարվում է բավարար, եթե ճիշտ պատասխաններ են տրվել թեստային առաջադրանքի հարցերի առնվազն 95%-ին:
2. Մասնագիտական կարողությունները, որոնց ստուգման համար պահանջվում է կատարել հետևյալ գործողություններից որևէ մեկը՝
 - Ըստ ներկայացվող տեխնոլոգիական քարտի պնևմատիկական կոման մուրճի վրա պատրաստել օղակի կովածք:
 - Կատարել դրոշմում հատային նախապատրաստվածքով: